ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 օգոստոսի 2026 թ. N 265-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՄԵԼԻՔ ԱԴԱՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ N 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն և «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» (ՀՕ-225-Ն) օրենքների համաձայն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 15-րդ, 17-րդ և 18-րդ կետերին համապատասխան՝ հիմք ընդունելով «Թուրիս» ՍՊ ընկերության հիմնադիր տնօրեն Ա. Վ. Առաքելյանի դիմումը (մտից N 1149, 07.07.2026 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. «Թուրիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2003 թվականի մարտի 25-ի N 959688 վկայական) Ջերմուկ քաղաքի Մելիք Ադամյան փողոցի N 6 հասցեում գտնվող 1,35 հա մակերեսով հողամասում (փաստացի չափագրմամբ՝ 1,34234 հա, կադաստրային ծածկագիրը՝ 10-002-0020-0005) գտնվող ինքնակամ կառուցված 14,62 քմ արտաքին մակերեսով շինությունը՝ կաթսայատան մի հատվածը, (ներքին մակերեսը՝ 10,6 քմ, այսուհետ՝ շինություն) համարել օրինական (ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2026PAXULY):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նված շինությունը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոնների պահպանմամբ, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված շինության օրինականացման համար հողամասի սեփականատերը պարտավոր է սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Ջերմուկի համայնքապետարանի 900365031278 հաշվեհամարին մուծել 93745 (իննսուներեք հազար յոթ հարյուր քառասունհինգ) դրամ (տարածա–գնահատման (գտնվելու վայրի) 8-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.3206, 1 քմ-ն՝

6412 դրամ), հակառակ դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետի «ե» ենթակետին համապատասխան սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Թուրիս» ՍՊ ընկերության հիմնադիր տնօրեն Ա. Վ. Առաքելյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 7
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 օգոստոսի 2026 թ. N 266-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆԱՀԻՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն և 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Անահիտ Ռոբերտի Մարգարյանի հայտը (մտից՝ N 1368, 2026 թվականի օգոստոսի 7)՝ ***որոշում եմ՝***

1. Անահիտ Մարգարյանին 2026 թվականի ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի N 39 հասցեում գտնվող խանութում ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 54):

2. Անահիտ Մարգարյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031351 հաշվեհամարին վճարելու տեղական տուրք՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անահիտ Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 10
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 օգոստոսի 2026 թ. N 267-Ա

«ԹԵՐՄԱԿՎԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն և 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 88-Ն որոշումների, հաշվի առնելով «Թերմակվա» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Եվա Խաչատրյանի դիմում-հայտը (մտից՝ 1370, 2026 թվականի օգոստոսի 7)՝ ***որոշում եմ՝***

1. Թույլատրել «Թերմակվա» ՍՊ ընկերությանը 2026 թվականի ընթացքում Ջերմուկ քաղաքի Իսրայել Օրու փողոցի N 3 հասցեում, ըստ ներկայացված էսքիզի, տեղադրելու արտաքին գովազդ (Թույլտվություն N 55):

2. «Թերմակվա» ՍՊ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031484 հաշվեհամարին յուրաքանչյուր ամիս մուծել 1125 (հազար հարյուր քսանհինգ) դրամ տեղական տուրք 1 քմ-ի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Թերմակվա» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Եվա Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 10
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 օգոստոսի 2026 թ. N 268-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԶԱՐԻՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 15-ԻՑ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն և 2025 թվականի դեկտեմբերի 24-ի N 87-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Զարինե Հայրապետյանի հայտը (մտից՝ N 1400, 2026 թվականի օգոստոսի 14)՝ ***որոշում եմ՝***

1. Անհատ ձեռնարկատեր Զարինե Հայրապետյանին տալ 2026 թվականի օգոստոսի 15-ից դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակաընթացքում Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի N 31 հասցեում գտնվող խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 56):

2. Անհատ ձեռնարկատեր Զարինե Հայրապետյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031351 և 900365031336 հաշվեհամարներին վճարելու տեղական տուրք՝ 15000-ական (տասնհինգ հազարական) դրամ՝ եռամսյակի հաշվարկով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Զարինե Հայրապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և տեղական տուրքի վճարման առկայությամբ՝ ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 17
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 օգոստոսի 2026 թ. N 269-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՉՈՒՏ ԳՅՈՒՂԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Արմեն Սավադի Խուրշուդյանի դիմումը (մտից N 228, 29.01.2021 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի 1-ին փողոցի գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1000 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 211,33 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 168,1 քմ) բնակելի նշանակության շինությունը (բնակելի տուն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2026CNMRCT:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գ Կեչուտ, 1-ին փողոց, 4-րդ նրբանցք N 1:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Արմեն Սավադի Խուրշուդյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 17
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 օգոստոսի 2026 թ. N 270-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՄԵԼԻՔ ԱԴԱՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հիմք ընդունելով «Թուրիս» ՍՊ ընկերության հիմնադիր տնօրեն Ա. Վ. Առաքելյանի դիմումը (մտից N 1149, 07.07.2026 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Մելիք Ադամյան փողոցի վրա՝ «Թուրիս» ՍՊ ընկերության պատկանող հողամասին կից գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 174,7 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 67,25 քմ ընդհանուր արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 57,01 քմ) հասարակական նշանակության շինությունը (կաթսայատան մասը և ծածկը) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2026HGNVJC:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Մելիք Ադամյան փողոց N 6/1:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած «Թուրիս» ՍՊ ընկերությանը՝ ի դեմս հիմնադիր տնօրեն Արարատ Վիլսոնի Առաքելյանի՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 17
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 օգոստոսի 2026 թ. N 271-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-Ի N 217-Ա ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 210-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ ***որոշում եմ***՝

1. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 11-ի «Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 7-րդ փողոցի վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված շինությունը համայնքի սեփականություն համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին» N 217-Ա և 2025 թվականի սեպտեմբերի 15-ի «Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղում գտնվող անշարժ գույքը համայնքային սեփականություն ճանաչելու և իրավունքի պետական գրանցման ներկայացնելու մասին» N 210-Ա որոշումները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 17
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 օգոստոսի 2026 թ. N 272-Ա

ՀՈՎՀԱՆԵՍ ԱՐՇԱԿԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Արշամ Հովհաննեսի Արշակունու դիմումը (մտից՝ N 1407, 17.08.2026 թ.) ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Հովհանես Արշակի Հարությունյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով (հիմք՝ 06.07.2000 թ. քաղվածք Գնդեվազ համայնքի տնտեսությունների N 2 գրքից, գրանցման N 133) պատկանող Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 2-րդ փողոցի վրա գտնվող անշարժ գույքին՝ հողամասին և դրա վրա գտնվող բնակելի տանն ու օժանդակ շինություններին, տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ, 2–րդ փողոց N 2:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՄԱՆԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2026 թ. օգոստոսի 18
Ջերմուկ